

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մուտարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Օգոստոսի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր. առավոտյան, Վեհարանում Վեհափառ Հայրապետին է այցելում Կանադայի արտաքին գործերի և ազգային պաշտպանության մըշտական կոմիտեի նախագահ Մարսել Պրյուդոմը:

Նորին Սրբության և մեծարգո հյուրի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում:

* * *

Օգոստոսի 14-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է «Օրհնութիւն խաղողոյ» կարգը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Օգոստոսի 15-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Օգոստոսի 20-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Ռումինիայի արտակարգ և լիապոր դեսպան տիար Տրայան Դոտդարը՝ իր տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում սրտագին զրույց, բարեկամական ջերմ մթնոլորտում;

* *
*

Օգոստոսի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Չաքայանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո» (Ղուկ. Ա 35) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 25-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում 1983—84 ուսումնական տարվա համար, ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի նախագահությամբ, տեղի են ունենում ընդունելության քննություններ:

*
* *

Օգոստոսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պոլատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Օծեր իդով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս» (Սաղ. ԻԲ, 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: